

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԶԵՎԸ

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր (2 օրինակ) և համակարգչային շարվածքով (MS WORD ծրագրով), «Anal Armenian» (հայերեն), «Times New Roman» (ռուսերեն, անգլերեն, թուրքերեն) տառատեսակներով, 11 տառաչափով (ֆոնտով):

2. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, ունենա լուսանցքներ, ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածի վերնագրերը պետք է թարգմանված լինեն հայերեն, ռուսերեն ու անգլերեն լեզուների:

3. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են վերջում՝ ընդ որում, հղումներն ու դրանց համարակալումը պետք է անել ձեռքով՝ չդիմելով ծրագրի ավտոմատացված տարբերակին: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլն: Ծանոթագրությունները բերվում են 10 տառաչափով, տողերի միջև բացվածքը՝ 1, բնագրի լեզվով, օրինակ՝

- Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի մասն առաջին., հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 379;
- Архив внешней политики Российской Федерации МИД РФ (далее – АВП РФ), ф.04, оп.39, п.232, д.53001, л.7;
- Насонов А.Н. История русского летописания XI - начала XVIII века. Очерки и исследования. - М., 1969. - с. 499;
- Ali Yaşar Sarıbay, 1976 Yılı Sosyoloji Konferansları. 14. kitap -“Ziya Gökalp ve Türk Devrimi”, İstanbul 1976, s.89;
- 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, www.ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/rr_tk_final_en.pdf
- Hugh Poulton, Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish nationalism and the Turkish Republic, New York, New York University Press, 1997, p. 146;

ՏԱՌԱԴԱՐՉՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԵՆԻՑ

Թուրքերեն եզրերն ու հատուկ անունները տառադարձվում են ժամանակակից թուրքերենում գրելաձևին և հնչողությանը համապատասխան. օրինակ՝ Mahmut – Մահմուդ, Pamuk – Փամուք և այլն: